



Հ	Ա	Յ	Ե	Ր	Է	Ն	Ն
Ֆ	Ն	Բ	Ս	Ա	Հ	Ր	Է
Ր	Է	Ա	Պ	Ն	Ն	Ա	Ր
Ա	Ր	Ն	Ա	Է	Դ	Չ	Է
Ն	Ե	Գ	Ն	Ր	Կ	Ի	Ն
Ս	Ս	Լ	Ե	Ե	Ե	Ն	Ա
Ե	Ի	Ե	Ր	Բ	Ր	Ա	Ս
Ր	Ո	Ր	Է	Ա	Է	Ր	Ր
Է	Ռ	Է	Ն	Ր	Ն	Է	Ե
Ն	Ր	Ն	Ա	Ա	Ն	Ն	Գ

- Ռուսերէն
- Հայերէն
- Արաբերէն
- Հնդկերէն
- Գերմաներէն
- Չինարէն
- Սպաներէն
- Անգլերէն
- Ֆրանսերէն

Պահուած բառը 7 տառերէ կը բաղկանայ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՂԷՏԱ ԼԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ

7 Դեկտեմբեր 1988-ը ժողովուրդի իրերայաջորդ սերունդները պիտի յիշեն իբրև սեւ օր մը: Սոյն թուականին մայր հայրենիքի եւ սփիւռքեան գաղութներու համայն հայութիւնը խոր յուզումի մատնուեցան, երբ ահաւոր երկրաշարժը աւերեց Հայաստանի մեջ գտնուող կարգ մը քաղաքներ: Աղէտը պատահեցաւ այն պահուն, երբ 1988 տարին իր լրումին կը մօտենար, առանց բերելու լուծում մը Արցախեան Պահանջատիրութեան: Տասնեակ հազարաւոր հայ գաղթականներ ողողածէին Հայաստանը յոյս տալով ազերիներու ոճրային ծրագիրներէն: Հանրային կարծիքին ուշադրութիւնը անմիջապէս շեղեցաւ ազերիներու կողմէ կազմակերպուած հայերու բռնագաղթէն:



7 Դեկտեմբերի երկրաշարժը աննախընթաց էր այն իմաստով, որ տեղի ունեցաւ խիտ բնակչութեամբ շրջաններու մէջ եւ պատճառեց առաւելագոյն թիւով մարդկային վնասներ: Հայաստանը հարուածող երկրաշարժը ունէր 10.7 աստիճանի մերքալի ուժգնութիւն, որ վնասեց հետեւեալ քաղաքները.
 -Սպիտակ, որուն բնակչութիւնը կը հասնէր մօտ 50 հազարի: Սպիտակը քանդուած է 90 առ հարիւր համեմատութեամբ:
 -Լենինական, որուն բնակչութիւնը կը հասնէր մօտ 220 հազարի: Այս քաղաքը քանդուած է 60 առ հարիւր համեմատութեամբ:
 -Ինչպէս նաեւ Կիրովականը եւ ուրիշ շրջաններ: Երկրաշարժը ցնցած էր նաեւ Երեւանէն մաս մը , որուն գոհ գացին մօտ 10 հազար ուսանողներ: Ահաւասիկ, այսպիսի ծանոսկշիտ պայմաններու մէջ, հայ ժողովուրդը հայրենիք թէ սփիւռք, զօրաշարժի ենթարկեց իր բոլոր ուժերը, մարդկային եւ նիւթական վնասներ պատճառած այս աղէտը համազգային ճիգերով դիմագրաւելու համար:
 Հայրենի ժողովուրդը, որ նոյն ժամանակ հաստատ յանձնառութեամբ կը մղէր Արցախեան պահանջատիրական պայքարը, երկրաշարժին առթած աւերին եւ քանդումի ահաւոր մթնոլորտին մէջ, ինքզինք դրած է կրկնակի տագնապները դիմագրաւելու վճռակամութեան առջեւ: Միջազգային ընտանիքը չթերացաւ Հայաստանի աղետեալներուն օգնութեան փութալու իր ճիգերուն մէջ: Այս պայմաններուն մէջ արտակարգ փոյթով, բազմաթիւ երկիրներէ նպաստներ առաքուեցաւ Հայաստան:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԴՐՕՇԱԿԸ :

Հ.Մ.Ը.Մ.ի դրօշակը քառանկիւն է: Ան բաժնուած է եռանկիւնաձեւ երկու մասի: Երկուքին միացման գիծը կ'երկարի վերի աջ կողմի անկիւնէն մինչեւ վարի ձախ կողմի անկիւնը: Ձախ կողմի եռանկիւնը կարմիր է, իսկ աջ կողմի եռանկիւնը՝ կապոյտ: Կեդրոնը ներկայացուած է միութեան վահանը՝ Հ.Մ.Ը.Մ. գրութեամբ:

Դրօշակին չափերն են՝ 150x100 սմ. սրահային դրօշակներու պարագային, իսկ 180 x120 սմ. տողանցքներու ընթացքին գործածուող դրօշակներու պարագային:

Դրօշակին վերի աջ կողմի անկիւնը տեղ գտած է շուշանաձողիկը՝ փոքր չափով, իսկ վարի ձախ կողմի անկիւնը՝ 1918-ը, միութեան հիմնադրութեան թուականը:

Հ.Մ.Ը.Մ.ը ունի նաեւ սկաուտական դրօշակ, որ իր չափերով եւ գոյներով կը նմանի միութեան դրօշակին, մէկ տարբերութեամբ որ կեդրոնը, փոխան վահանին, տեղ գտած է սկաուտական շուշանաձողիկը՝ մեծ չափով եւ «Բարձրացիր-բարձրացուր» գրութեամբ:

Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնական եւ սկաուտական դրօշակները շրջաններուն կը տրամադրուին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ:

«ՄԱՆԿԱԿԱՆ ԵՒՐԱՏԵՍԻԼ 2019»:

ԵՐԳԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՅԹԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՆՆԵՐՈՐԴՆ Է.

ՅԱՂԹԵՑ ԼԵՀԱՍՏԱՆԸ



«Մանկական Եւրատեսիլ 2019»

երգի հեղինակաւոր միջազգային մրցոյթին, որ 24 Նոյեմբերին Լեհաստանի Գլխիցէ քաղաքին մէջ տեղի ունեցաւ, յաղթեց Լեհաստանը ներկայացնող երգչուհի Վիքի Գաբորը «Superhero» երգով:

Հայաստանի պատուիրակ 13-ամեայ Քարինա Իգնատեան, որ կատարեց «Colours Of Your Dream» երգը, դատական կազմի եւ առցանց քուէարկութեան արդիւնքով իններորդ դիրքը գրաւեց:

Ժիւրիի քուէարկութեան համաձայն Հայաստանը 8 միաւոր ստացաւ Աւստրիալիայէն, 5-ական միաւոր՝ Ֆրանսայէն եւ Ղազախիստանէն, 10-ը Ռուսիայէն, 6-ական միաւոր՝ Հիւսիսային Մաքեդոնիայէն եւ Ալպանիայէն, 7-ական միաւոր՝ Իսպանիայէն եւ Վրաստանէն, 3-ական միաւոր Պելառուսէն եւ Լեհաստանէն, 2 ձայն՝ Մալթայէն, 4-ական միաւոր՝ Ուքրանիայէն ու Փորթուկալէն:

Մեր երկիրը իր 12 միաւորը տուաւ Հոլլանտային:

Հեռուստադիտողի քուէարկութեամբ Քարինա Իգնատեան 115 միաւոր վաստակեց:

Քարինան «Մանկական Եւրատեսիլ» երգի մրցոյթին Հայաստանը ներկայացնող 14-րդ մասնակիցն է: